ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N 1920-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

<<_____>> _____ 2019թ. N_____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N 1920-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 7-ի «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 1920-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 5-րդ կետում՝

ա. «ա» ենթակետը «ինչպես նաև» բառից հետո լրացնել «նախապատրաստական և» բառերով,

բ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «թ» ենթակետով.

«թ) պրակտիկայի կազմակերպում և անցկացում.».

2) որոշմամբ հաստատված կանոնադրության 10.1-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «ինչպես նաև» բառից հետո լրացնել «նախապատրաստական և» բառերով,

բ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9) ենթակետով.

«9) պրակտիկայի կազմակերպում և անցկացում։»։

3) որոշմամբ հաստատված կանոնադրության 72-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«72. Կոնսերվատորիան իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ և ուրիշներից գույք վարձակալել։ Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի։ Ամրացված գույքի վարձակալության հանձման արդյունքում ստացված եկամուտները կոնսերվատորիայի սեփականությունն են։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։